

Պաշտպանե՛ք ինքներդ ձեզ խարդախությունից

Խարդախությունից ձեր լավագույն պաշտպանությունը կլինի լավ տեղեկացված լինելը: Ահա մի քանի խորհուրդ, որոնք կօգնեն ձեզ Health Insurance Marketplace-ի միջոցով HealthCare.gov կայքում բժշկական ապահովագրության ընդգրկում ստանալու համար`

Ձեր տվյալները համացանցում ապահով պահե՛ք:

- Հավաստիացե՛ք, որ ձեր համակարգիչն ունի անվտանգության հեղինակավոր ծրագրային ապահովում և որ այն նորացված է: Անվտանգության ծրագրային ապահովումը կարող է օգնել պաշտպանել ձեր համակարգիչը վիրուսներից: Դուք կարող եք գտնել համակարգչի անվտանգության համար ծրագրային ապահովում հեղինակավոր ընկերություններից: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք staysafeonline.org/stay-safe-online/free-security-check-ups կայքը:
- Ձնջե՛ք ֆասսագիր ծրագրային ապահովումը (երբեմն կոչվում է «ֆասսագիր»), որը ներառում է վիրուսներ և լրտեսներ, որոնք տեղադրվում են ձեր համակարգչում, հեռախոսում, կամ բջջային սարքում առանց ձեր համաձայնության: Վասագրերը կարող են հանգեցնել ձեր սարքի խափանմանը և կարող են օգտագործվել ձեր առցանց ակտիվությունը դիտանցելու և կառավարելու համար: Հանցագործներն օգտագործում են ֆասսագրերը ձեր անձնական տվյալները գողանալու, սփամ ուղարկելու և խարդախություն իրականացնելու համար: Լրացուցիչ տեղեկություններ իմանալու համար այն բանի մասին, թե ինչպես հայտնաբերել և ջնջել ֆասսագրերը այցելե՛ք onguardonline.gov/articles/0011-malware կայքը:
- Ստեղծեք ապահով գաղտնաբառեր:
 - Օգտագործե՛ք երկար, անկանխատեսելի գաղտնաբառեր՝ մեծատառերի և փոքրատառերի, թվերի և հատուկ նիշերի համակցությամբ: Օգտագործեք գաղտնաբառեր, որոնք չեն պարունակում հասարակ բառեր կամ ձեր անհատական տվյալները՝ ինչպես, օրինակ՝ ձեր անունը կամ ծննդյան ամսաթիվը:
 - Պետք չէ օգտագործել նույն գաղտնաբառը մի քանի հաշիվների համար, ինչպես օրինակ՝ ձեր Marketplace հաշվի և ձեր էլ.փոստի կամ այլ առցանց հաշիվների համար:
 - Պետք չէ ձեր գաղտնաբառերն ասել որևէ մեկին և պետք է պահել ձեր գաղտնաբառերն ապահով տեղում:
 - Վստահե՛ք ձեր զգացողություններին: Եթե էլ.հաղորդագրությունը կասկածելի է թվում, ապա պետք չէ բացել այն, որևէ հավելվածներ կամ սեղմել որևէ հղումներ: Եթե կայքն ապահով չի թվում, ապա պետք չէ մուտքագրել որևէ անձնական տվյալ:
- Մուտքագրեք ձեր անձնական տվյալները միայն այն կայքերում, որոնք ծածկագրված և անվտանգ են:
- Ստանդարտ հատկանիշները, որոնք ցույց են տալիս, որ կայքն անվտանգ է, օրինակ՝ [HealthCare.gov](https://healthcare.gov) կայքը, կողպեքի նշանն է և «https»-ով կայքը:
- Փակեք ձեր գնմիչը և անջատվեք համացանցից, երբ համակարգչի մոտ չեք, այնպես որ հաքերներին հասանելի չլինեն ձեր տեղեկությունները:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք Առևտրի դաշնային հանձնաժողովի խորհուրդները Համակարգչային անվտանգության վերաբերյալ consumer.ftc.gov/topics/computer-security կայքում, կամ այցելեք onguardonline.gov կայքում:

Ձեր տեղեկություններն ապահով պահե՛ք HealthCare.gov կայքում:

Ձեր գաղտնիության պաշտպանությունը շատ կարևոր է Marketplace-ի համար: Մենք պաշտպանում ենք ձեր անձը նույնականացնող տվյալները շատ եղանակներով, ներառյալ՝

- Մենք չենք հավաքում անձը նույնականացնող տեղեկություններ (ԱՆՏ), բացառությամբ դեպքերի, երբ դուք ինքներդ նախընտրեք դրանք մեզ տրամադրել:
- Մենք տեղեկություններ չենք հավաքում արևտրային մարքեթինգի կամ բժշկական ապահովագրության համար դիմելու և այդ ծրագրում ներգրավվելուն չառնչվող որևէ նպատակի համար:
- Մենք պահանջում ենք, որ դուք հաստատեք ձեր անձը նախքան Marketplace-ի հաշիվ ստեղծելը և դիմում լրացնելը: Մենք տալիս ենք հարցեր, որոնց կարող եք պատասխանել միայն դուք՝ հիմնվելով ձեր հաշիվների և ձեր վարկային պատմությունից անձնական տվյալների վրա: Սրա շնորհիվ կանխվում է ոչ լիազորված անձանց կողմից ձեր անունով առանց ձեր իմացության հաշիվներ բացելը կամ բժշկական ապահովագրության ծրագրում ընդգրկվելու համար դիմելը:
- Մենք նաև կարող ենք պահանջել ձեզանից ներկայացնել փաստաթղթեր՝ ապացուցելու համար ձեր դիմումում ներառված տվյալները:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այն մասին, թե ինչպես ենք մեր պաշտպանում ձեր գաղտնիությունը կարդացե՛ք Marketplace-ի գաղտնիության վերաբերյալ ամբողջական հայտարարությունը [HealthCare.gov/privacy](https://www.healthcare.gov/privacy) կայքում:

Բացի քայլերից, որոնք ձեռնարկում ենք ձեր գաղտնիությունը պահպանելու համար ստորև ներկայացնում ենք մի քանի խորհուրդ, որոնց կարող եք հետևել, որպեսզի [HealthCare.gov](https://www.healthcare.gov) կայքում ձեր տեղեկություններն ապահով լինեն՝

- Այցելե՛ք ճիշտ կայքը: Marketplace-ում ընգրկվելու նպատակով դիմելու համար հավաստիացե՛ք, որ այցելում եք [HealthCare.gov](https://www.healthcare.gov) կայքը: Կան շատ այլ ընկերություններ, որոնք կարող են փորձել ապակողմնորոշել ձեզ և ստեղծեն այն կեղծ տպավորությունը, որ դրանք կապված են Marketplace-ի կամ [HealthCare.gov](https://www.healthcare.gov)-ի հետ: Գոյություն ունեն նաև կայքեր, որոնք նույն տեսքը կան նմանատիպ համացանցի հասցե ունեն (օրինակ՝ .com-ներ, org-ներ, և net-ներ) և օգտագործում են «healthcare» (առողջապահություն) և «Marketplace» բառերը, սակայն պաշտոնական, վստահելի աղբյուր չեն:
- Հավաստիացե՛ք, որ [HealthCare.gov](https://www.healthcare.gov) կայք այցելելիս կայքի համացանցային հասցեն լինի՝ <https://www.healthcare.gov> և ունենա կողպեքի պատկեր: Մա նշանակում է, որ կայքն անվտանգ է:
- Մաքրե՛ք ձեր թխուկները և շտեմը: Դա կատարելու նպատակով լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք [HealthCare.gov/help/i-am-having-trouble-logging-in-to-my-marketplace-account](https://www.healthcare.gov/help/i-am-having-trouble-logging-in-to-my-marketplace-account) կայքը:

Տեղեկացված եղե՛ք:

- Այցելե՛ք [HealthCare.gov](https://www.healthcare.gov) կայքը՝ հիմնական տեղեկատվությանը ծանոթանալու համար:
- Ուշադիր համեմատե՛ք ապահովագրության ծրագրերը՝ նախքան որոշում կայացնելը:
- Փնտրեք պաշտոնական պետական կնիքներ կամ լոգոներ: Եթե օժանդակություն եք ստանում Marketplace-ի օգնականից, ապա խնդրե՛ք, որ նա ցույց տա իր վկայագրերը:
- Իմացե՛ք Marketplace-ի Ընդգրկման բաց ամսաթվերը: Ոչ ոք չի կարող ընգրկի ձեզ դրանց ավարտից հետո, բացառությամբ եթե ունենաք համապատասխանող կենսական իրադարձություն կամ պայմանունակ լինեք Ընդգրկման հատուկ ժամանակահատվածի համար: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [HealthCare.gov/coverage-outside-open-enrollment](https://www.healthcare.gov/coverage-outside-open-enrollment) կայքը:
- Իմացե՛ք, որ Marketplace-ի այնպիսի օգնականները, ինչպիսիք են Navigators-ները և դիմումի հարցերով վկայագրված խորհրդատուները չպետք է ձեզանից դրամական միջոցներ պահանջեն՝ ձեզ Marketplace-ի ծրագրում ներգրավելու դիմաց: Դուք պետք է կասկածամիտ լինեք այն անձի վերաբերյալ, ով ձեզանից վճար պահանջի ընդգրկման դիմաց:
- Իմացե՛ք, որ եթե ունեք Medicare, ապա Marketplace-ի ապահովագրական ծրագիր վաճառելը ձեզ հակաօրինական է:
- Իմացե՛ք, թե ինչպես պաշտպանել ինքներդ ձեզ հարկային սքամից: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [HealthCare.gov/how-can-i-protect-myself-from-tax-scams/](https://www.healthcare.gov/how-can-i-protect-myself-from-tax-scams/) կայքը:

Պաշտպանեք ձեր անձնական տվյալները:

- Ոչ ոք չպետք է ձեզ հարցնի ձեր անձնական բժշկական տվյալները:
- Գաղնի պահեք անձնական և հաշիվների համարները: Պետք չէ տրամադրել ձեր Սոցիալական ապահովության համարը (ՄԱՀ) կամ կրեդիտային քարտի համարը կամ բանկային տեղեկություններն այն ընկերություններին, որոնց հետ դուք կապ չեք հաստատել կամ ի պատասխան չինդրված գովազդի: **Ուշադրություն**՝ եթե օժանդակություն եք ստանում Marketplace օգնականից, ապա նրան կարող են անհրաժեշտ լինել որոշակի անձնական տվյալներ, ինչպես օրինակ՝ ձեր ՄԱՀ-ը՝ ձեզ ընդգրկվել օգնելու համար:
- Երբեք չպետք է տրամադրեք ձեր անձնական տվյալները որևէ մեկի, ով ձեր տուն է գալիս առանց ձեր թույլտվության, նույնիսկ եթե նրանք ներկայանում են որպես Marketplace-ի աշխատողներ:

Հարցեր տվե՛ք և ստուգե՛ք ձեզ տրվող պատասխանները:

- Յուրաքանչյուր նահանգում Marketplace-ը ձեզ համար ունի պատրաստում անցած օգնականներ՝ անվճար հիմունքներով: Այցելե՛ք LocalHelp.HealthCare.gov այքը կամ զանգահարեք Marketplace-ի Զանգերի կենտրոն՝ 1-800-318-2596 համարով՝ որպեսզի գտնեք ձեր տարածքում օգնական: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-855-889-4325 հեռախոսահամարով:
- Հարցեր տվե՛ք, եթե որևէ տեղեկություն պարզ չէ կամ շփոթեցնող է:
- Գրանցեք և հաշվառեք ձեզ օգնողների անունը կամ անունները, նրանց գործատուներին և նրանց հեռախոսահամարները, փողոցի հասցեն, փոստային հասցեն, էլ.փոստի հասցեն և կայքը:
- Պետք չէ որևէ բան ստորագրել, որն ամբողջովին չեք հասկանում:

Դուք կարող եք հեռախոսազանգ ստանալ Marketplace-ից:

Դիմելուց հետո դուք հնարավոր է հեռախոսազանգ ստանաք Marketplace-ից, որի ընթացքում ձեզ կինդրեն հաստատել տեղեկատվությունը կամ լրացուցիչ տեղեկություններ տրամադրել: Եթե մենք չունենանք այս տեղեկատվությունը մենք հնարավոր է չկարողանանք ընթացք տալ ձեր դիմումին: Այցելե՛ք HealthCare.gov/how-can-i-protect-myself-from-fraud-in-the-health-insurance-marketplace կայքը՝ լրացուցիչ տեղեկությունների համար:

Հաղորդեք որևէ կասկածելի բանի մասին: Եթե խարդախություն եք կասկածում, ապա հաղորդեք այն՝ զանգահարելու միջոցով՝

- Marketplace Զանգերի կենտրոն՝ 1-800-318-2596 հեռախոսահամարով:
- Ձեր տեղական, նահանգային կամ դաշնային իրավապահ մարմիններ:
- Ձեր Ապահովագրության նահանգային դեպարտամենտ:

Եթե կասկածում եք անձը նույնականացնող տվյալների գողություն, կամ կարծում եք, որ անձնական տվյալներ եք հաղորդել ինչ-որ մեկին, ում չպետք է հաղորդեիք՝

- Զանգահարե՛ք ձեր տեղական ոստիկանության բաժանմունք:
- Զանգահարե՛ք Առևտրի դաշնային հանձնաժողովի Անձը նույնականացնող տվյալների գողության հարցերով թեժ գիծ՝ 1-877-438-4338 հեռախոսահամարով: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-866-653-4261 հեռախոսահամարով:
- Այցելե՛ք ftc.gov/idtheft կայքը՝ լրացուցիչ տեղեկությունների համար:

Դուք իրավունք ունեք ստանալ Marketplace-ի տեղեկատվությունը հասանելի ձևաչափով, ինչպիսին է մեծ տառերով տեքստը, Բրայլը կամ աուդիոն: Դուք նաև իրավունք ունեք բողոք ներկայացնել, եթե կարծում եք, որ ձեր նկատմամբ խտրականություն է կիրառվել: Այցելե՛ք CMS.gov/about-cms/agency-information/aboutwebsite/cmsnondiscriminationnotice.html կայքը, կամ զանգահարեք Marketplace Զանգերի կենտրոն 1-800-318-2596 հեռախոսահամարով՝ լրացուցիչ տեղեկությունների համար: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-855-889-4325 հեռախոսահամարով:

Վճարված է Առողջապահության և սոցիալական ծառայությունների դեպարտամենտի կողմից

